ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«__05__» __փետրվարի__ 2019 թ. № ____67-Ա____

ՀՐԱՄԱՆ

ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԻՐԱՑՄԱՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N21-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի N861-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հսկիչ-դրամարկղային մեքենայի (մեկ հատի) իրացման գին սահմանել՝

1) 60000 դրամ՝

ա. այն կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար, որոնց համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է 2019 թվականի հունվարի 1-ից,

բ. 2019 թվականի հունվարի 1-ից ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար,

գ. 2019 թվականի ընթացքում «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հարկերից ազատման արտոնագիր ստացած անհատ ձեռնարկատերերի համար,

դ. 2019 թվականի հունվարի 1-ից շրջանառության հարկ վճարող համարվող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների, ինչպես նաև 2019 թվականի հունվարի 1-ից բացառապես արտոնագրային հարկ վճարողների համար,

2) 160000 դրամ՝ սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետում չնշված այն կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար, որոնք 2018 թվականի որևէ հաշվետու ժամանակաշրջանում հաշվառվել են որպես ավելացված արժեքի հարկ վճարողներ (բացառությամբ բացառապես արտոնագրային հարկ վճարողների):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունվարի 19-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենայի իրացման գին սահմանելու մասին» N21-Ա հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ